ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

8050 ԿՎտ հզորությամբ արևային ֆոտովոլտային կայանի կառուցման

ՀԱՆՐԱՅԻՆ ԼՍՄԱՆ

Ք. Գավառ *24.02.2025թ.*

Գավառի համայնքապետարանում տեղի ունեցավ «ՍՈԼԱՐՍԻՆԵՐՋԻ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված Գեղարքունիքի մարզի Գավառ համայնքում նախատեսվող 8050 ԿՎտ հզորությամբ արևային ֆոտովոլտային կայանի կառուցման նախագծի շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվության վերաբերյալ հանրային լսում:

Մասնկացում էին Գեղարքունիքի մարզպետարանի, Գավառի համայնքապետարանի, Գավառի ավագանու անդամների, բնապահպանական ՀԿ-ների ներկայացուցիչներ, փորձագետ և բնակիչներ /մասնակիցների ցանկը կցվում է/:

«Գեոէկոնոմիքս» ՓԲԸ-ի գլխավոր տնօրենի տեղակալ Ռաֆայել Քոչարյանը ներկայացրեց ծրագրի՝ շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատականը:

«Էկովիլ» ՍՊԸ-ի գլխավոր ինժեներ Հարություն Ավագյանը՝ նախագծին վերաբերվող մանրամասներ:

Ծրագրի բնապահպանական հետևանքների և արդյունավետության մասին խոսեց Գավառի համայնքապետարանի գյուղատնտեսության և բնապահպանության բաժնի պետ Արծրուն Ղուրշուդյանը:

Գեղարքունիքի մարզպետի աշխատակազմի և Գավառի համայնքապետարանի ներկայացուցիչները և բնակիչները ուղղեցին իրենց հետաքրքրող հարցերը:

Նիստի արձանագրող՝ **Գավառի համայնքապետարանի**

մամուլի քարտուղար՝ **Ա. Մանուկյան**